# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ՕՇԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Հասցեն՝ գ.Օշական Մ.Մաշտոցի փ. 105
հեռ. 091-45-94-83

address: vil. Oshakan M.Mashtots st. 105
cell phone 091-45-94-83

N121

21/11/2016թ.

*ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ*

*ՊԱՐՈՆ՝ Գ. ԳՅՈԶԱԼՅԱՆԻՆ*

***Հարգելի պարոն Գյոզալյան***

*Կից Ձեզ ենք ներկայացնում Օշական համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 16-ի արտահերթ նիստով ընդունած թիվ 33 և 34 որոշումները:*

*Առդիր 6 էջ:*

Invalid signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Օշական, (091)459483, (091)341124, oshakan.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 33

ԱՇՈՏ ԱՄԻՐԲԵԿՅԱՆԻՆ <ՕՇԱԿԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի 15 կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

***Օշական գյուղական համայնքի ավագանին որոշում է՝***

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝
Աշոտ Ամիրբեկյանին <Օշականի մշակույթի պալատ> ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում նշանակել և կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր մինչև հունիսի 1-ը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Օշական, (091)459483, (091)341124, oshakan.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 34

ՕՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և տեղական վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով

***Օշական համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հիմնական օբյեկտների համար՝
ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական(ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.
բ) սույնկետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա) 201-իցմինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,
բբ) 501-իցմինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,
բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.
բդ)3001-ից և ավելի քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,
դ) 20 ևավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների
վերակառուցման,ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբՀայաստանիՀանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների( այդթվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.
բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդթվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն,ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվումէ 5000 դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
***«1)*** *ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝*
*ա. մինչև* ***26*** *քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև* ***10.001*** *դրամ,*
*բ.* ***26-****ից մինչև* ***50*** *քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև* ***13.001*** *դրամ,*
*գ.* ***51-****ից մինչև* ***100*** *քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև* ***20.001*** *դրամ,*
*դ.* ***101-****ից մինչև* ***200*** *քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև* ***25.001*** *դրամ,*
*ե.* ***201-****ից մինչև* ***500*** *քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև* ***45.001*** *դրամ,*
*զ.* ***501*** *և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև* ***100.001*** *դրամ:».*
***«2)*** *ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝*

*ա. մինչև **26** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` մինչև **10.001** դրամ,*
*բ. **26**-ից մինչև **50** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` մինչև **13.001** դրամ,*
*գ. **51**-ից մինչև **100** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` մինչև **20.001** դրամ,*
*դ. **101**-ից մինչև **200** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` մինչև **25.001** դրամ,*
*ե. **201**-ից մինչև **500** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` մինչև **45.001** դրամ,*
*զ. **501** և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` մինչև **100.001** դրամ:».*

***5. Համայնքի տարածքում՝***
***ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.***
***բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200000 դրամ:***
***գ.խանութներում,կրպակներում հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30000 դրամ:***

*«**գա)** համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է`*
*հիմնական շինությունների ներսում`*
*ա. մինչև **26** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` մինչև **5.001** դրամ,*
*բ. **26**-ից մինչև **50** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` մինչև **10.001** դրամ,*
*գ. **51**-ից մինչև **100** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` մինչև **15.001** դրամ,*
*դ. **101**-ից մինչև **200** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` մինչև **20.001** դրամ,*
*ե. **201**-ից մինչև **500** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` մինչև **30.001** դրամ,*
*զ. **501** և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` մինչև **50.001** դրամ,*
*ոչ հիմնական շինությունների ներսում`*
*ա. մինչև **26** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար`*

մինչև **1.001** դրամ՝
բ. **26**-ից մինչև **50** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև **2.001** դրամ,
գ. **51**-ից մինչև **100** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև **4.001** դրամ,
դ. **101**-ից մինչև **200** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև **8.001** դրամ,
ե. **201**-ից մինչև **500** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև **15.001** դրամ,
զ. **501** և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև **25.001** դրամ:»:

**6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի և զվարճանքի շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝**
**ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000դրամ.**
**բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000դրամ.**
**գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000դրամ.**
**դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.**
**ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.**
**զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:**
**7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝**
**ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.**
**բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.**
**գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.**
**դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ:**
**ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:**
**8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:**
**9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:**
**10.Տեղական վճարի դրույքաչափերի սահմանումը**
**Օշական համայնքում տեղական մրցույթի կամ աճուրդի մասնակցելու համար տեղական վճար սահմանել 1000 դրամ:**

Կողմ -6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱԲԻՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԱՆԱՆԻԱ
2. ԱԴԱՄՅԱՆ ՄԱՐԱՏ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ
4. ՀՈՎՆԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
5. ՄԵՍՐՈՊՅԱՆ ՄԵՍՐՈՊ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՀԵԿՏՈՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**